165 Երբ մահվան շուքը քեզի չարչարե,

1. Երբ մահվան շուքը քեզի չարչարե,
Երբ հոգուդ շուրջը ամեն լույս մարե,
Մի՛ հուսալքվիր, Տեր Աստված հոն է,
Տեր Աստված հոն է ու քեզ կտեսնե:

Փրկությունը Տերոջմեն է,
Ծունկի եկո՛ւր, աղոթե՛,
Փրկությունը Տերոջմեն է,
Դուն միշտ Իրեն վստահե՛:
Փրկությունը, օրհնությունը Տերոջմեն է,
Ծունկի եկո՛ւր, աղոթե՛: (3)

2. Թե թուլացել ես դու հավատքի մեջ,
Թե տեղ ես տվել մեղքին սրտիդ մեջ,
Հավատքով կրկին հասի՛ր Գողգոթա,
Տերը գթառատ կրկին կգթա:

3. Երբ նեղությունը շատ ցավեր տա քեզ,
Փոթորկոտ հույզեր ու դավեր տա քեզ,
Կորստյան վախը թե քեզ պարուրի,
Ծունկի ե՛կ, կանչի՛ր. «Տե՛ր Հիսուս, արի՛»:

4. Ու թե մարմինդ խիստ հոգնած լինի,
Աչքերիդ լույսը թե պակսած լինի,
Մահվան շուքի մեջ թեկուզ պտտես,
Հիշի՛ր, որ կողքիդ Փրկիչ Տեր ունես: